

Ապետիք ընտանիքի ու Շահի միջեւ բարեկամութիւնը, զոր Ապետիքի մեծհօրեղբայրը կապած էր։ Սուրիմանի արքունիքն ալ ապաստանարան տուած էր Հռոմէն եկած պարսկահայ երիտասարդին, մինչեւ որ նա խանձորդ ազգականի մը զրպարտութիւնները զգուցեցին զինքը։ Իրականութիւնը ան է որ նա հոն չուզեց մնալ, որուն ինք իբր պատճառ կը բերէ, թէ չէր ուզեր «անհաւատներու» արքունիքին ծառայել, բայց ապահովաբար ուրիշ պատճառներ ալ կային, զորս կը լռէ։ Առ հասարակ մանրամասն ու որոշ տեղեկութիւններ միայն Պիտիպոսին հետ կապ ունեցող երրորդ պարսկական ճամբորդութեան մասին միայն կրնանք տալ, վաւերական աղբիւրներու վրայ հիմնուած, ուր կենդանի պատկերներով մեր աչքերուն առջեւ կը դնէ պարսկ արքունիքը։

Արդ, ամէն յաջողութեամբ վերջացուցած
ըլլալով իրենց յանձնուած դիւանագիտու-
կան ու քաղաքական գործերը, քիչ վերջ
Մատթէոս քահանայն կը գտնենք տեղական
մեծագոյն կեդրոններէն մէկուն, Նաշիրովանի
մէջ իբր առաջնորդ: Պէտք է սակայն նախ
քիչ մը լոյս սփռենք Հռոմի Սուրբ Աթոռին
ու Պարսկաստանի քրիստոնեաներու փոխ
յարարելութիւններու մասին որովհետեւ
այսպէս միայն պիտի կարենանք հասկնալ
թէ Ապետիք որքան մեծ ծառայութիւն մա-
տուցած է քրիստոնէութեան, որուն համար
ընդունած էր արեւելքի քրիստոնեաներու
միաւթեան կարեւոր գործը: Եւրոպայի պե-
տերը ու Պապն ալ հաշիւ կ'ընէին նաեւ
մինչեւ Հնդկաստան ջրուած մեծ թիւով

քրիստոնեաներու վրայ: Հոս սակայն չատանհաւասարութիւններ պէտք էր հարթել. մանաւանդ թէ ամէնէն առաջ կապակցութիւն պէտք էր հաստատել Ս. Աթոռի, Արեւելքի ու Արեւմուտքի քրիստոնէութեան պետերու միջեւ: Պետրոս Ապետիք առ այժմ Շահին արքունիքը կ'ապրէր, ու ինչպէս Cehil Sutun-ի մէջ կը գրէ, արդէն հոն տեղէն սկսած էր կարգաւ հունգարացիներու ծագման մասին («de notatu digne de origine Ungarorum») արեւելեան պրիւրները: Կոյնպէս իրմէ կ'իմանանք թէ ինչպէս Շահի Կ. Պոլսոյ դեսպանը լուր բերած էր 1664-ի աշնան Սանկոթարտի յաղթուն թեան: Շահը ճիշտ ընթրիքի երթալու վրայ էր երբ Մարգպետին հետ հասաւ փոշոտած ու վառտակարեկ դեսպանը՝ իմացնելով թէ թուրքերը ծանր պարտութիւն մը կրած են Հունգարիոյ մէջ: Սանկոթարտի մարտին մէջ Ահմէտ փաշա բազմաթիւ մարդ կորսնցուցած էր: Շահի արքունիքի մէջ ուրախութեան մեծ հանդէսներ սարքուեցան, որուն նկարագրութիւնը ուրիշ ոչ մէկ տեղ կը գտանենք. սակից կ'իմացուի թէ որքան մտահոգութիւն կը պատճառէր Պարսկաստանի՝ չունգարիոյ նուաճումը թուրքերէն:

Երբ Ապետիք Շահի արքունիքին մէջ վեր-
ջացուց իր գործը՝ մեկնեցաւ դէպի Պարսկաս-
տանի քրիստոնէութեան մայրաքաղաքը՝
Ինչպէս վերեւ յիշեցինք:

Հիմա պետք է ծանոթանանք Յակոբ Դ
պատրիարքի անձին ալ:

ԹԻՂԳՐ. Հ. ԱՆԴՐԵԱՍ ՖՈԿՈԼԵԱՆ

(Գարոշնակերի)



ቆ ሆ ጊ ያ ካ ቴ ጊ

Քաղցկեղը արդի մեծ առեղծուածներէն
մին է, որոնք դեռ բազմաթիւ անակնկալներ
կը պարունակեն: Ուսուցչապետ Հիւկէն
Փարիզի համալսարանի Քաղցկեղի բաժնի
փոխ Տեսուչը՝ «Մի քանի նախնական քըշ-
նարտուչքիւններ քաղցկեղի վրայ» վերնագրին
տակ հատոր մը հրատարակած է՝ շահեկան
և նոր տեսութիւններով, որուն ամփոփումը
կ'ընէ Սնորէ Թեթրի (տքթ. գիտութեանց)
«Les Nouvelles Littéraires» ի մէջ՝ Թ.
1013:

Քաղցկեղին սահմանը դեռ անորոշ է. ան
կը համապատասխանե՛ փճացնող ու բռնա-
գրաւող յատկութիւններով օժտուած՝ դի-
մացկուն հիւսուածային վերակազմութիւն-
ներու, որոնք կարող են կրկնուելու և տե-
ղափոխուելու նախնական ախտակեղրոնէն
հեռու։ Զարախտութեան, այսինքն պալա-
րին գէշ տեսակ ըլլալը (malignité) ճշգրիտ՝
շատ դժուարին է. ինչպէս նաեւ ախտին
քաղցկեղ ըլլալը կամ ոչ՝ որոշելը չափազանց
փափուկ հարց մըն է, մանաւանդ երբ վերքը
նուազ կարեւորութիւն ունի և յատուկ նշան-
ներէն զուրկ է։ Քաղցկեղը թագուն հի-
ւանդութիւն մըն է, որուն ցայտուն ախ-
տանիշերը ուշկեկ կը յայտնուին. անոր
ախտաբանութիւնը (noxologie) դիրաւ չի
վերլուծուիր՝ բոլոր պարագաները ներկա-
յացնող պարզ, միակ ախտանշանի վրայէն։
Այս դժուարութիւնը հետեւեանքն է սխալ
ախտաճանաչումի և գէշ դարմանամեքերու։
Քաղցկեղի կանխաճշդումը միմիայն մասնա-
հատումի քննութեամբ (biopsie) կարելի է
ընել. կասկածելի վերքի մը հատումը և իր
հիւսուածաբանական քննութիւնը ամենա-
ճիշդ կերպով պէտք են ըլլալ. նոյնիսկ ման-
րեղիտակը ամէն անգամ չէ կարող հա-
տատել ախտին չար կամ անփնտա ըլլալը։
Այսօր՝ հասարակաց կարծիքն է որ՝ քաղց-

կեղը շատ աւելի ընդհանրացած է քան
էրբեք: Իրականին մէջ սակայն այս յաւե-
լումը երեւութական է: Բժշկութեան մաս-
նագիտական յառաջադիմութիւնը կը յայտնէ
քաղցկեղի անծանօթ մնացած տեսակներ:
Այսպէս օրինակի համար, թոքերու քաղց-
կեղը միայն դարէ միլիւր ծանօթ է. մշտա-
տեւ ցնցդատապը (bronchite chronique)
իրականին մէջ քաղցկեղ մըն է. փին գալը
(colique de miserere), աղիքներու խցումը
(obstruction intestinale), վերնաղիի քաղց-
կեղներ են: Ուղեղային պալարները ատեն
մը խելապատակի գայրուց (méningite) կը
նկատուէին: Քաղցկեղային գեղձուոյցները
պիտակուած էին իբր ուռախտ (tubercu-
lose) կամ փոսնկախտ: Իսկ որովայնակե-
ղերը (ulcères), վերնամաշկի այտուցի (épi-
thélioma) կը համապատասխանէին: Պոր-
տալի գայրուցները (péritonites) անծանօթ
պալարներու ընդհանրացումը կը ներկա-
յացնէին: Միւս կողմէն՝ կեանքի միջին
տեւորութեան յաւելումը կը նպաստէ աճում
մը նորահիւսկէններու (néoplasies) թուոյն:
Միայն ամենախիստ և երկար ժամանակի
միջոցին քննութեամբ հաստատուած վիճա-
կազրութիւններ պիտի վճռեն թէ՛ արդեօք
քաղցկեղի շատնալը իրական է թէ՛ առե-
րեւոյթ:

Որոշ տարիք մը կու տան քաղցկեղի, ինչ որ գոյութիւն չունի, ծնունդէն մինչեւ ծերութիւն քաղցկեղը կը տեսնուի. բայց, աւելի յաճախ հասուն տարիքի մէջ: Այնչէն աւելի վտանգաւոր և բազմապիսի գէշ պաշարները կը յայտնուին 30էն 60 տարեկան հասակին մէջ: Քաղցկեղը թէ՛ այրերը և թէ՛ կիները կը մեռցնէ կորովի հասակի մէջ, և ոչ թէ ծերերը, որոնք յաճախ կ'ունենան մորթի այտուց, ինչ որ դելաւա դարմանելի է: Կանաչի ծննդագործարաններու քաղցկեղները քառասնամեայի հիւանդութիւններ են: Քաղցկեղը երիտասարդներու ամորձիքներուն կը յարձակի. մինչդեռ օսկրի պաշարը (օսկրախտ) պատանիներու և մանուկներու մէջ կը տիրէ: Ստեղծայ մանուկը

զերծ չէ քաղցկեղէն. գէշ պալարներ պատահած են նոյնիսկ արգանդի սաղմին մէջ: Տղու մը վրայ կանխադասուած քաղցկեղը անվրիպելիօրէն բուժելի է: Քաղցկեղի յաճախումը ոչ միայն տարիքի մէջ նկատելի է այլ նաեւ սեռի մէջ: Արիւնը՝ ենթակայ է ծննդագործարաններու քաղցկեղին, բայց հազիւ երբեք մարսողական գործարաններու: Մինչդեռ այլ մարդուն մէջ հակառակն է. ծննդեան գործարանի քաղցկեղը հազիւ երբեք կը պատահի, մինչդեռ մարսողական վտանգի վրայ բունած քաղցկեղը գրեթէ միշտ այրերու վրայ կը յարձակի: Այլ մարդոց խոշակափողի պալարը յաճախադէպ է, ինչպէս՝ կանանց ծիծերու քաղցկեղը: Նախաքաղցկեղային վիճակի մը գաղափարը, վէրք, ճմլում, այտուց իբր սկզբունք ընդունուած է: Ընդհանրապէս նախաքաղցկեղային վիճակ կը նկատուին՝ այրուցքի սպիւններ, կամ հին սպիւններ, կամ երկարատեւ տապալիքի բորբոքած վէրքեր, և փրանկախ տային կամ պալարախտային կեղտում (ulcération):

Նախաքաղցկեղային երեւոյթներու այս վարկածը՝ պէտք է որ ամենամեծ խոհանարակութեամբ նկատողութեան առնուի: Փարիզի մէջ 25000 նախաքաղցկեղային վիճակներու քննութիւնը՝ անոնցմէ քառորդին իսկ հաւանականութեան ապացոյցը չտուաւ: Չանագան օրինակներ մասնաւորապէս աչքի կը զարնեն: Չինացին չափազանց տաք, եռացած բրինձ կ'ուտէ, ինչ որ յաճախակի որկորի այրուցք կը պատճառէ. կ'ըսուի թէ այդ այրուցքը կը նպաստէ քաղցկեղին: Մինչդեռ Չինուհին՝ որ եփած պաղ բրինձ կ'ուտէ, հազուադէպ է որ քաղցկեղ ունենայ: Իսկ թէ որ ուրիշ երկիրներ նկատողութեան առնենք, կոկորդի քաղցկեղը այլ մարդոց կը պատահի սովորաբար: Չենք գիտեր ինչպէս մեկնել ծիծերու վերամաշկի այտուցները (epitheliomas) «սեղմիրանին կուրծքին վրայ ճնշելով» ինչպէս որ կը կարծուէր. և սակայն կուրծքի քաղցկեղին քանակը չպակսեցաւ: Ինչ ինչ ծանօթ ախ-

տահարումներ իրապէս նախաքաղցկեղային են, վասն զի իրենց գէշ աճումը երազ է: Արդեօք իրական առնչութիւն մը գոյութիւն ունի՞ր և է վերաբորբոքումի և քաղցկեղի միջեւ: Վերաբորբոքումը անհրաժեշտօրէն քաղցկեղածին գործիչ մը չէ, բայց արիւնապալարի նկատմամբ՝ զոր կը գրգռէ, երբեմն սաստկացնող զեր մը կը կատարէ. յառաջացող կերպարանափոխումի տրամադիր մղումով ան կրնայ անծանօթ պալար մը յայտնել:

Քաղցկեղը ժառանգական է: Այս հարցին մէջ ու քննութիւնները վճռական արդիւնք մը չեն տար: Անխտելի է թէ՛ կան պատահաներ որոնք ժառանգականութեան նշաններ ցոյց կու տան. բայց բացասական պարագաներ ալ չեն պակսիր: Մկներու վրայ եղած փորձերը ցոյց տուին թէ ձագերը (90-95 տո հարիւր) յատկապէս տրամադիր էին քաղցկեղի, իսկ ուրիշներ բոլորովին բացասական:

Քաղցկեղի բուժումի մասին կրնա՞նք խօսիլ: Ուսումնասիրութիւններու վիճակագրութիւնները՝ կը պահանջեն առ նուազն հինգ տարուան միջոց մը՝ քաղցկեղի մը բուժումին հաւանականութիւնն ունենալու համար: Այս ժամանակամիջոցէն յետոյ շատ հազուադէպ են վերահաւանութիւն և վերակենդանացում. բայց տեղական ախտակրկնումը կրնայ վերայայտնուիլ: Քաղցկեղի ախտաբուժութիւնը պէտք է որ միակ նպատակ ունենայ պալարը անհետացնելու, մասնաւոր թէ վարակիչ վէրքերու պարսաւորումը (essaimage) կանխարգելուի: Քաղցկեղի ծաւալումը ամենամեծ վտանգի նշան է: Դարմանումի զէնքն է վերահատութիւն, ուստի՝ կենարուժութիւն, քիւրիաբուժութիւն (ֆ. ճառագայթներով), ելեկտրամագնիսմ (diathermo-coagulation): Իւրաքանչիւր դարմանածեւի յարմարութիւնը և ազդուութիւնը քաղցկեղի բնութեան պահանջէն կախումն ունի: Բանաւոր ընտրութիւն մը կը պահանջէ՝ ճիշդ, վճռական ու կատարեալ ախտահանաչում. ու հարկ է ընտրել զիտ-

նալ, վասն զի դարմանումի սկզբնաւորութեան մէջ եղած սխալ մը անջնջելի է: Նիւրիքաղցկեղի մը (naevo-carcinome) դարմանումը ելեկտրամագնիսմով գրեթէ ապահով է. նոյնը նշտարակով՝ անխուսափելի մահ է: Սկզբնական վիճակի մէջ գէշ ըլլալը անորոշ կուրծքի փոքրիկ այտուց մը երկու անգամ գործողութեան ենթարկուելով ախտին տեղափոխութեան երեւոյթը կը ստեղծէ. մինչդեռ անթերի դարմանումով կրնար բուժուիլ: Ընտրել գիտնալն է՝ բժիշկին դերը քաղցկեղին առջեւ: Ընտրութիւնը հարկ է որ սարմանական զգուշութիւններէ: Այս միջոցին խորհրդածութիւնները կը ցուցնեն որ կատարելի քաղցկեղը պէտք է ենթարկուի փորձառու և խզմով քաղցկեղագէտի մը քննութեան: Անհամար շատախօսներէ շատագուշտ կեղծ-գիտական դաբաժնումներ ոչ թէ միայն ապարդիւն ու փլատակար են, այլ նաեւ, իրական լաւագոյն դարմանումն ընելու թանկագին ժամանակը կորսնցնելու տան:

Ծանօթ. Քաղցկեղի վրայ Հայրենիք Օրութեան 1946, Նոյեմբերի 5, 6 թիւերուն մէջ, Ամերիկացի Ռոքօ Բ. Սպէնսըրի՝ որ Տնօրէն է Քաղցկեղի Ազգային Հաստատութեան, կար շատ շահեկան ու գիտական յօդուած մը:

Խտալիոյ մէջ եւս, տարիներէ ի վեր, շատ մը լուրջ ու գիտուն մասնագէտներ, յատուկ աշխատանոցներու մէջ այս աւերիչ ախտին դէմ պայքարելու համար աշխատութեան լծում են: Վերջերս Հոմի մէջ՝ բժիշկ Անթոնիօ Կուստենիէրէին քաղցկեղին գէմ գտած նոր դեղը F. A. 2, բաւական ազդու հանած է և փորձերը լաւ արդիւնք տուած են:

Հ. Յ. Բ.

ՎԻՐԱՅՈՑՅԻ ՄԸ ՊԵՏԱԿԱՐԱՆԷՆ

ԽՈՐՀՐԴԱՆՈՐ ՄԵՏ ՄԸ

Օր մը պիտակարանս կը թերթատէի, երբ «Ալիս Սենթէր» անունին հանդիպեցայ: Բայց ուշադրութիւնս աւելի լուսանցքի ծանօթագրութեան դարձաւ. «Յիշել Օնիկի Ուոքէրը»:

Առաջին վայրկեանին այս ծանօթագրութիւնը ինծի բան մը չըստ: Ապա, յանկարծ, ամբողջ պատմութիւնը բոլորովին լուսաւոր կերպով վերադարձաւ յիշողութեանս: Խեղճ Օնիկի Ուոքէրը խեղ տղեկ մըն էր, որ ինծի պատահեցաւ իբր քննութեան առարկայ, վկայականիս քննութիւնը տալու առեւ:

Քննութեան անցնիլս՝ ես Օնիկի Ուոքէրի կը պարտիմ. և իմ կողմէս մեծ ապերախտութիւն մը պիտի ըլլար զինքը մոռնալը:

Շատ պզտիկ տղեկ մըն էր ան, տոգոյն, մաշած, ծայրաստիճան խեղ, ուստի իր անունը (Walker = քալոր) կապուած է այն անգութ կատակներէն մէկուն, զոր երբեմն ճակատագիրը ընելու թոյլ կու տայ ինքնիւրեն: Ան առաջուց ընելու թոյլ կու տայ տարածուած էր, տարապի մը անկողինին վրայ տարածուած էր, տարապի մը մէջ պլուած, ու քննիչս տասնհինգ վայրկեան ու խնամքի եղանակը որոշելու համար:

Տեղագին քննեցի զինքը ոտքէն գլուխ. աչքերը, ակոսները, նշագեղձերը, կուրծքը, մորթը, սիրտը, ամէն տեղ: Բան մը չէի գտնար սակայն: Ո՛հ, ահաւասիկ. ոտքի յօդուածները ուռած էին, նոյնպէս արմուկները: Տարօրինակ փափուկ ուռեցքներ էին, կարծես մէջը բամպակ լեցուած ըլլար:

«Ո՛հ, գտայ» մտածեցի. «պալարային (tubercolare) երեւոյթներ յօդուածներու շուրջ»:

Սակայն չէի կրնար ճիշտել թէ այդ յօդուածները գրեթէ բնական ճկունութիւնն ունէին: Օնիկի ինծի պատմեց թէ միշտ կ'ուռնին անոնք, ու ճիշտ ասոր համար շատ անգամներ հիւանդանոց գացած էր, ու թէ միշտ աւելի կը գէշնար վիճակը:

Բան մը չէի հասկնար:

— Գործողութիւն ընելու փորձ մը բժիշկներու մտքէն չէ՞ անցած բնաւ: